ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 4
«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-7/45» ԾԱԾԿԱԳՐՈՎ ԳՀ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ

ք. Երևան 05 հոկտեմբերի 2018թ.
ժամը 11^{00}

Մասնակցում էին
Գնահատող՝
ՀՀ ՊՆ ՆՏԱ դեպարտամենտի ԹԱ վարչության պետի տեղակալ, Հ.Մելիքյան (ԳԱՊ),
ՀՀ ՊՆ ՆՏԱԴ ԹԱ վարչության իրային, ՎՔՆ, կոկտուփ-կենցաղային և սպորտային միջոցներով ապահովման բաժնի պետ, ՔՀՇ 1-ին դասի խորհրդական Գ. ՈՒստյան,
ՀՀ ԶՈՒ ԹՎ իրային ծառայության պետ, գնդապետ Վ.Պապյան,
Գնումները համակարգող (հանձնաժողովի քարտուղար)՝
ՀՀ պաշտպանության նախարարության նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտի գնումների փաստաթղթերի ձևակերպման վարչության նյութատեխնիկական միջոցների գնման փաստաթղթերի ձևակերպման բաժնի գլխավոր մասնագետ, ՔՀՇ 3-րդ դասի խորհրդական Տ.Աբրահամյան:

«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-7/45» ԳՀ ընթացակարգի հանձնաժողովի նիստի օրակարգը հաստատելու մասին.

(Տ. Աբրահամյան)

1. Մասնակիցների՝ գնանշման հարցում ընթացակարգի հրավերով պահանջվող (նախատեսված) որակավորման չափանիշներին իրենց համապատասխանությունը հավաստող փաստաթղթերը առկայության և դրանց՝ գնանշման հարցում ընթացակարգի հրավերով սահմանված պահանջներին համապատասխանության և ընտրված մասնակիցներին հայտարարելու մասին.
2. Հանձնաժողովի հաջորդ նիստի անկացման օրը, ժամը և վայրը որոշելու մասին.

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

1. Մասնակիցների՝ ԳՀ ընթացակարգի հրավերով պահանջվող (նախատեսված) որակավորման չափանիշներին իրենց համապատասխանությունը հավաստող փաստաթղթերը առկայության և դրանց՝ գնանշման հարցում ընթացակարգի հրավերով սահմանված պահանջներին համապատասխանության և ընտրված մասնակիցներին հայտարարելու մասին.

(Տ. Աբրահամյան)

1.1 05.10.2018թ.-ի նիստի ժամանակ, գնահատող հանձնաժողովը, մասնակիցների համապատասխանությունը հավաստող փաստաթղթերի ուսումնասիրության ընթացքում արձանագրեց, որ «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-7/45» ծածկագրով ԳՀ ընթացակարգի հրավերով պահանջվող որակավորման չափանիշներին 1-ին տեղ զբաղեցրած մասնակիցների համապատասխանությունը հավաստող փաստաթղթերը առկա են, և համապատասխանում են ԳՀ ընթացակարգի հրավերով սահմանված պահանջներին, սակայն «Սատուրն-Գրին» ՍՊԸ-ի կողմից ներկայացված որակավորման փաստաթղթերում առկա էր թերություն, մասնավորապես՝ հավելված 6 և հավելված 6.1 հաստատված չէին էլեկտրոնային ստորագրությամբ, ուստի հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցրեց որակավորման փաստաթղթերի գնահատման նիստը և սահմանված կարգով մասնակցին ծանուցվեց արձանագրված անհամապատասխանության մասին՝ առաջարկելով շտկել այն: Սահմանված ժամկետում «Սատուրն-Գրին» ՍՊԸ-ի կողմից շտկվել է նշված անհամապատասխանությունը և մասնակցի որակավորման փաստաթղթերը գնահատվել են համապատասխանող՝ Ընթացակարգի հրավերի պահանջներին:

Գնահատող հանձնաժողովը, ուսումնասիրելով 02.10.2018թ. ստացված, ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի՝ ՀՀ կառ. 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 43-րդ կետով նախատեսված, համապատասխան եզրակացությունը՝ որոշեց 1-ին տեղ զբաղեցրած մասնակիցների ներկայացրած հայտարարությունը համարել իրականությանը համապատասխանող:

1.2 09.10.2018թ. հիմք ընդունելով հանձնաժողովի անդամների կողմից ներկայացված գնահատման թերթիկները՝ հանձնաժողովը որոշեց 1-ին տեղ զբաղեցրած մասնակիցների որակավորման չափանիշները գնահատել համապատասխանող «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-7/45» ծածկագրով ԳՀ ընթացակարգի հրավերի պահանջներին և վերջիններիս հայտարարել ընտրված /հաղթող/ մասնակիցներ:

1.3 Հանձնաժողովը որոշեց հաստատել «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-7/45» ծածկագրով ընթացակարգի արդյունքում պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը և հրապարակել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի համաձայն:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

2. Հանձնաժողովի հաջորդ նիստի անկացման օրը, ժամը և վայրը որոշելու մասին.

(Տ. Աբրահամյան)

2.1 Հանձնաժողովը որոշեց հաջորդ նիստը հրավիրել գնման պայմանագիր կնքելու, իսկ չկնքվելու դեպքում այդ հանգամանքը հայտնի դառնալու օրվան հաջորդող օրացուցային օրը ժամը 11^{00}-ին, ՀՀ ՊՆ նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտի ԳՔՁ վարչության նիստերի դահլիճում:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

Գնահատող (ԳԱՊ) Հ.Մելիքյան

Գնահատող Վ.Պապյան

Գնահատող Գ. ՈՒստյան

Գնումները համակարգող՝ Տ.Աբրահամյան